ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017 թ. օգոստոսի 16 N 158-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.5-րդ կետի <<ժ>> ենթակետի և 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության 2017 թվականի օգոստոսի 15-ի թիվ 49/4-3304-17 գրությունը **կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքում ուսումնասիրություններ կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովին՝ 2017 թվականի օգոստոսի 17-ից մինչև օգոստոսի 21-ը վերոնշյալ գրությունով առաջադրված հարցերի վերաբերյալ իրականացնել ուսումնասիրություններ և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2017թ. օգոստոսի 16 N 158-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ս.Հովսեփյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Արմեն Կարապետյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Արայիկ Հակոբյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի ՄՀՊՏ պետ

Կարապետ Ժամհարյան- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Մուշեղ Հեպոյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ